

վրիպիլն մեծագոյն լինի վտանգաց առիթ, ցանկային եռանդոտութեամբ հուպ առնթեր նմին գտանիլ: Որպէս ասէ Արիստոտէլ է ֆիլոսոֆոս թէ՝ Չիք իր ինչ որ ցանկայ իմացութեան եւ ոչ ցանկանայցէ ընդունել զնա. զի եւ ոչ իսկ ցանկայր եթէ զոչինչ զգայր յայնմանէ հրճուանս բարեբաստագոյնս. որպէս եւ ոմն Սոփեստէս ոգէ ասելով. Հրճուին անձինք բանականաց՝ առ ի գիւտ միոյ իրի, որպէս եւ մերս ի գիտութիւն բնդհանրից: Համատիպ սմին եւ ոչ աննման ասէ Փրկիչն զգիւտ ոչխարին եւ գրամկանն կորուսելոյ: Այլ արգ, վասն զի ամենայն գոյք ցանկան կատարելութեան իւրեանց, ըստ Պրոկղոսի, որպէս ծառք՝ ծաղկանց եւ պտղոց. արծուի՝ արատեսութեան եւ վերամբարձութեան. տատրակն՝ ողջախոհութեան. արագիլն՝ արդարութեան. երկիր իւրոյ կայրութեան եւ յառաջբերութեան. հուրն՝ ջերմութեան. մրգեղէնք՝ քաղցրութեան. եւ ծաղկունք՝ հոտոյ եւ գեղեցկութեան. եւ մարդս՝ վախճանին իւրոյ վերջնոյ եւ փառացն աստուածանալոյ: Այլ վասն զի ի տարածամ ժամանակի հպեալ ի բաղձալին, ուստի եւ խղճալոյն հանդիպեալ կենի, որպէս եւ հրեշտական Վարդապետն Սուրբն Ներսէս Լամբրոնացի ասէ ի ճառս Սրբոյ Հոգւոյն, թէ արդարեւ ձգեաց մարդն զձեռն իւր ի փայտն կենաց, զոր յառաջն ի բաց առաքեցաւ ի նմանէ, էառ եկեր եւ զյաւիտենական անձին սեպհականեաց զկենդանութիւն: Այլ Աստուած՝ որ Աստուածանալոյ դիտմամբն ետեսդ՝ դմարդն, հնարս առ ի նոյն յարդարեաց բարեխնամութեամբ, զի զվայրանկեալս մեր բնութիւն, զառ ի վեր ածցէ ի փառս աստուածութեան արարեալ սանդուխտս վերելեակա եօթնեկի աստիճանօք. զի մարդն՝ որ եօթնեկի մոլութեամբ կորոյս զվախճանն իւր, գտցէ զնոյնն ի մէջ եօթնեկի խորհրդածութեանցն եկեղեցւոյ. որպէս ի տեսլեանն ասէ